

«ՉԹՈՂԻՆ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ ԱՊՐԵԼ,
ԳԵԹ ԹՈՒՅԼ ՏԱՆ ՄԱՐԴ ՄԵՌՆԵԼ...»

*Կամ՝ Մղորումներ Լեո Կամսարի «Սոցիալիզմի Սահարա»
(1959) ժողովածուի շուրջ*

Լեո Կամսարի ծննդյան 130-ամյակին

ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա

Գյումրու մասնաճյուղ

Համառոտ

Հոգվածում Լեո Կամսարի «Սոցիալիզմի Սահարա» ժողովածուի մասին է խոսք գնում: Ասելիքը վերաբերում է հատկապես գրքի էջերից դուրս մնացած օրագրային մի շարքի, որն առկա է եղել հեղինակի արխիվում, սակայն, գուցե թե սուրյեկտիվ հանգամանքների պատճառով 1959 թվականի սկզբից դուրս է մնացել և ընդհանրապես դուրս է մնացել ամբողջ ժողովածուից: Սակայն մեր կողմից տպագրված «Լեո Կամսարի օրագրային արձակը» մենագրության Հավելված մասում այդ էջերն արդեն իսկ տեղադրվել և լույս են տեսել:

Հոգվածի նպատակն է երգիծաբանի ժողովածուն հետազայում ի մի բերողների, ամբողջացնողների ուշադրությունը սևեռել այս ուղղությամբ. նշված էջերը անպայման պետք է ներառվեն 1959 թվականի սկզբում՝ մինչև «Սոցիալիզմի Սահարա» ժողովածուի արդեն գոյություն ունեցող էջերը:

Բանալի բառեր. օրագիր, արխիվային նյութեր, ժողովածու, ինքնակենսագրական էջեր, գրականություն, մենագրություն, հուշեր:

Հայ երգիծաբանության երեք պյուններից մեկի՝ Լեո Կամսարի օրագրային ժողովածուները մինչև այսօր էլ վերծանման և տպագրության փուլում են: Այժմ ընթերցողի սեղանին, թեպետ սուրյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ տպագրված ժամանակագրական ոչ համապատասխան հերթականությամբ, հեղինակի յոթ օրագրերն են՝ «Մահապուրծ օրագիր (1925-1935)», Եր., «Լուսաբաց հրատարակչատուն», 2008 թ., «Բանտիս օրագիրը», Եր., «Ամարաս», 2010 թ., «Չապրած օրեր», Եր., Փրինթինֆո, 2016 թ.,

«Կարմիր օրեր», Եր., Նաիրի հրատ., 2000 թ., «Սոցիալիզմի Սահարա («Կարմիր օրեր 1959 թ.»)», Եր., ՀԳՄ հրատ., 2009 թ., «Հալոցք («Կարմիր օրեր 1960 թ.»)», Եր., Էդիթ Պրինտ, 2013 թ., «Միայնակը», Եր., Էդիտ Պրինտ, 2018 թ.:

Շուրջ ինը տարի առաջ, երբ լույս տեսավ Լեո Կամսարի «Սոցիալիզմի Սահարա («Կարմիր օրեր 1959 թ.»)»՝ օրագրային ժողովածուներից հերթականը, դեռևս ոչ մեկի համար տեսանելի չէր այն, որ առկա է ինչ-որ վրիպակ, մի բան, որը, սակայն, ճակատագրական պետք է լիներ թե՛ հեղինակի, թե՛ գրքի և թե՛ հետագայում երգիծաբանի գործերին անդրադարձողների համար: Վերջին միտքը անշեղորեն վերաբերում է տողերիս հեղինակին:

Խոսքը Լեո Կամսարի «Սոցիալիզմի Սահարա» օրագրերի ժողովածուի սկզբնամասից դուրս մնացած մեկ տասնյակից ավելի էջերի մասին է, որոնց նվիրված է սույն հոդվածը: Նախ նշենք, որ նախկինում անտիպ այս էջերն այսօր արդեն հրատարակված են և առաջին անգամ ներկայացվում են ընթերցողին¹:

Կարևոր է համեմատության և համադրության միջոցով փաստել նշված էջերի գոյությունը, ժողովածուի համապատասխան մասից դուրս մնալը, լույս աշխարհ գալը (թեև որպես գրքի Հավելված), ինչպես նաև նորահայտ էջերը գրականագիտական-վերլուծական ամփոփ տողերով ներկայացնելը:

Հույս ունենք, որ երբ Լեո Կամսարի երկերը լույս տեսնեն օրագրերի ամբողջական ժողովածուի կամ հատորյակների տեսքով, այս բաց մնացած էջերը կգտնեն իրենց համապատասխան տեղը:

Նախ՝ ներկայացնենք գրքում տեղ գտած վրիպակի պատճառը: Մեր ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ Լեո Կամսարի «Սոցիալիզմի Սահարա» օրագրին նախորդող «Կարմիր օրեր» ժողովածուն, որն ավարտվում է 1958 թվականի դեկտեմբերի 31, չորեքշաբթի ամսաթվով, գոյություն ունեցող ձեռագրերին համապատասխան՝ ունի ավարտուն տեսք²: Սակայն հեղինակի 1959 թ. Նոր տարիով սկսվող օրագրության էջերում հենց առաջին իսկ տողերից անհամապատասխանություն նկատվեց, որը, ըստ մեր ենթադրության, պայմանավորված էր սկզբից պակասող էջերի փաստով: Գրողի

1 Տե՛ս՝ Կ. Մարտիրոսյան, Լեո Կամսարի օրագրային արձակը, Մենագրություն, Եր., 2017, 276 էջ:

2 Մեզ բախտ է վիճակվել աշխատել այս գրքի վրա, թեպետ գործ ենք ունեցել միայն հետագայում համացանցում տեղադրված տարբերակի հետ:

ձեռագրերը մեկ անգամ ևս ուսումնասիրելու արդյունքում պարզվեց, որ 1959 թվականի օրագրի սկզբից որոշակի էջեր դուրս են մնացել և գտնվում են հեղինակի արխիվում:

Ինչ մտքեր է արձարծում գրողն այդ մի քանի էջերում:

Բնականաբար, երգիծաբանի անտիպ մնացած էջերն էլ ինքնակենսագրական են, և հենց առաջին իսկ տողերից ժամանակաշրջանի պատկերն է ներկայացված՝ լայն՝ իրականության բազմաթիվ կամ գրեթե բոլոր բնագավառներին անդրադարձներով: 1959 թվականի «Հինգշաբթի 1»-ից մինչև «Չորեքշաբթի 7» ընկած մեկշաբաթյա ժամանակահատված է սա, որտեղ ծանոթանում ենք Լեո Կամսարի հարևանասիրությանը, Չեկայի և վերջինիս գրագիտությամբ «փայլող» աշխատակիցների, նաև աֆորիստիկ արժեք ունեցող մտքերին, իրականության նկատմամբ վերաբերմունքին և այս ամենը, անշուշտ, հնչուն քաղաքական տողատակով, նրբին բնորոշումներից մինչև սուր քննադատական խոհերով: Իհարկե, այնպես, ինչպես բնորոշ է Լեո Կամսար գրողին՝ քաղաքական սուր ու արդիական (մեծ մասամբ նաև մեր ժամանակների համար) իրադարձությունները չըջանցելու, նրանց ռեալիստական նկարագրությունից չխուսափելու անկրկնելի վարպետությամբ:

Այս ամենի հետևությամբ կարելի է վստահորեն ասել, որ «Սոցիալիզմի Սահարա» օրագրի առաջին հրատարակությունից գուցե թե սուրյեկտիվ հանգամանքների բերումով դուրս են թողնվել այս էջերը:

Համեմատության համար մեջբերենք մի քանի հատված: Այսպես՝ «Կարմիր օրեր» օրագիրն ավարտվում է 1958 թվականի դեկտեմբերի 31-ին:

«Չորեքշաբթի-31. Վաղը Նոր տարի է, բայց ոչ ինձ համար: Ինձ համար Նոր տարի է այն օրը միայն, երբ բոլշևիկյան լծից կազատվեմ: Դրա համար հիմիկվանից մտածում եմ՝ ինչ անել, որ վաղվա տոնական օրը հասարակ օրվանից ավելի աննկատ անցնի, ինչպես անեմ, որ չտեսնեմ:

Այնքան, որ մտադիր եմ վաղը... «չապրել»»¹:

«Սոցիալիզմի Սահարա»-ն սկսվում է 1959 թ. հունվար 2 ամսաթվով: Կրկին մեջբերում ենք.

«Ուրբաթ 2. Մինչև օրս ես աշխարհի քարտեզ չունեի: Այսօր առա ու պատիս զարկեցի: Սրանից հետո պարապ ժամերին կսկսեմ ողջ աշխարհը ման գալ...»²:

1 Լեո Կամսար, Կարմիր օրեր (Անտիպ էջեր), Եր., 2000, էջ 469:

2 Լեո Կամսար, Սոցիալիզմի Սահարա, Եր., 2009, էջ 11:

Գրողի ձեռագրերից մնացած պատառիկները եկան ապացուցելու, որ մինչ այդ էջեր կան:

Հեղինակը գրում էր տասներկու թերթանոց տետրերի մեջ, որոնցում անգլեն աչքով էլ տեսանելի է, որ առկա է թվականների հետուատաշություն: Ամենայն հավանականությամբ 1958 թվականն ամփոփող տետրում մնացել է որոշակի ազատ հատված, և գրողը որոշել է 1959-ի սկիզբը գրել այդտեղ:

Մեջբերենք նախորդի իրական շարունակությունը լինելը ապացուցող հատվածը:

«Հինգշաբթի 1. Եթե ես ինձ համարեմ ջաղացի առու, ապա պիտի ասեմ, որ մինչև օրս բանեցնում էի երկու ջաղաց. նյութ էի տալիս սովետական թերթերին և գրում էի ինձ համար:

Այժմ որովհետև սովետական թերթերն ինձ այլևս չեն տպագրում, «ջուրն» ամբողջովին շուտ եմ տվել իմ սեփական «ջաղացի» վրա ու սովետական կարգերը լցնելով վրան՝ «աղում» եմ ամբողջ կարողությամբ:

Ես գրում եմ աշակերտական տասներկու թերթանոց տետրակների մեջ: Սովետական այլանդակություններն արձանագրելու ճանապարհին ինձ ահագին, մեծ քանակությամբ այդպիսի տետրակներ են պետք, բայց ես երբեք մեծ քանակությամբ չգրված տետրակ չեմ պահում մոտս, առնում եմ մեկ-մեկ: Եթե Չեկան հանկարծ տունս խուզարկության մտնի և կարդա գրված տետրակները ու կողքին բազմաթիվ չգրվածներ, պիտի հարցնի.

- Այս չգրված տետրակներում ի՞նչ ես գրելու:

- Չգիրեմ: Մոռասս ինչ որ թելադրեց, այն պիտի գրեմ:

Չեկիսրը, որ ամենայն հավանականությամբ անգրագետի մեկը պիտի լինի, չիմանալով մոռասյի իմաստը՝ պիտի հրամայի.

- Կանչիր մոռասյիդ, թող գա թելադրի:

- Մոռասս շնոր է վախկոտ, չեկիսր տեսնելիս լեղին պատրվում է:

- Հասցեն տո՛ր, ես բռնությամբ կբերեմ:

- Ես Չեկայի ագենսր չեմ, որ մարդ մալրեմ:

- Այդպե՛ս, դե առա՛ջ ընկիր բանս՝ այնպեղից արսոր գնալու համար:

Եվ չգրված տետրակներին համար ես ավելի խոշոր պատիժ կատանամ, քան գրվածների...»¹:

¹ Լեո Կամսար, Անտիպ: Տես՝ Կ. Մարտիրոսյան, Լեո Կամսարի օրագրային արձակը, Հավելված, Եր., 2017, էջ 253-272:

Ահա այստեղից էլ սկսվում է Չեկայի «գրագետ», ամեն ինչից գաղափար ունեցող աշխատակիցների նկատմամբ գրողի վերաբերմունքի արտահայտության ևս մեկ արդարացի ճիշդ:

Թեև սա ամենևին էլ նորություն չէր նրա ստեղծագործությունների էջերում, սակայն այստեղ ասես նորովի է հնչում, մանավանդ, երբ իմանում ենք, թե երգիծաբանը հատկապես ինչ պատճառով էր գրում տասներկու թերթանոց տետրերի մեջ և մանավանդ ինչի՞ համար միանգամից մի քանիսը չէր գնում, այլ բավարարվում էր միայն նախորդի ավարտով, որպեսզի գնի նորը: Այս հանգամանքը, իհարկե, ավելի խոր հիմքեր ունի. Լեո Կամսարը նշում է, որ դա ավելորդ կասկածից խուսափելու համար էր: Սակայն հնարավոր է, որ այստեղ դեր է խաղացել նաև հեղինակի սոցիալական վիճակը. գուցե նա չէր կարող միանգամից մեծ քանակությամբ տետրեր գնել: Ինչևէ: Խոսքը գրողն ամբողջացնում է իրեն բնորոշ ամփոփումով. «...Մեր օրենքով անմեղները մեղավորներից ավելի են պատժվում: Մեր աչքի առաջ խոսողը հինգ տարով դատապարտվեց, իսկ չխոսողը՝ տասը»:

Նշված էջերից մեկ ուրիշում Լեո Կամսարը նախ հիշում է իր մանկությունը, ներկայացնում է իրեն, ապա միտքն այնքան սահուն է անցնում իր ժամանակի քաղաքական իրադարձություններին, որ թվում է՝ մինչ այդ էլ հենց միայն այդ մասին է խոսել և ամենևին էլ ոչ իր դպրոցական ճիշտ կամ սխալ լուծած խնդիրների, որոնք, ինչն ամենից ճիշտն էր ըստ երգիծաբանի, միայն գրվում էին քարե տախտակների վրա՝ անմիջապես ջնջելու ակնկալիքը աչքի առջև ունենալով:

«Ուրբաթ 2. Մանկությանս, երբ ես սովորում էի մեր քաղաքի ծխական դպրոցում, մեր թվաբանության ուսուցիչը խնդրում թույլ տրված մի փոքրիկ սխալի համար գազանաբար ջարդում էր մեզ: Ականջներս արմատահան էր անում և գետին գցած ֆալախայի էր կապում: Ես էլ բնավորությամբ՝ սաստիկ վախկոտ: Ամեն անգամ, երբ պետք էր լինում թվաբանական խնդիր լուծել, մտածում էի՝ կարող է պատահել հանկարծ սխալվեմ ու ծեծ ուտեմ. ավելի լավ չէ՞ մի իմացողից արտագրեմ, տանեմ ցույց տամ. ճիշտ է, բան չեմ սովորի, բայց ողջանդամ դուրս կգամ դասարանից: Սարսափից անգամ չէի փորձում լուծել. այնպես որ ինձ համար էլ պարզ չեղավ, թե մաթեմատիկայի մեջ ընդունակություն ունեմ, թե՞ ոչ:

Երբ միջնակարգ դպրոց մտա, ինձ հետ տարա նաև մեջս արմատացած հին սարսափը: Այնտեղ էլ էի արտագրում. այնպես որ սիրտ չարի ողջ կյանքումս թվաբանական խնդիր լուծել:

Մենք խնդիրները լուծում էինք ոչ թե թղթի, այլ քարի տախտակների վրա՝ քարի գրիչներով: Սխալվելիս թքում, ջնջոցով սրբում: Քարետախտակյան այս մեթոդը շատ հարմար էր մանավանդ ինձ նման բույժ աշակերտի համար: Եթե ես խնդիրը լուծեի տետրակների մեջ, դպրոցն ավարտելիս առաջս դիզված պիտի ունենայի հսկայական դեզ տետրակների՝ ամբողջովին սխալներով լի: Ո՞ւմ է պետք այսպիսի «ստեղծագործություն»:

Չէ, քարի տախտակը հրաշալի բան է սխալ գործողի համար: Հիմա մանավանդ: Սովետական կառավարությունը հատորներով օրենսգրքեր է տպագրել տալիս և մեկը մեկի վրա շարում՝ բոլորն էլ սխալ: Եթե քարե տախտակի վրա գրած լինեք, անմիջապես կթքեք ու ջնջոցով կսրբեք իր օրենքները...

Նույն կառավարությունը միլիոնների քսանհինգ տարով աքսորի դատապարտեց, վերջում զգաց իր սխալը և դատավճիռները քարի տախտակի վրա գրված չլինելու պատճառով չկարողացավ իր սխալն ուղղել: ...

Ինչ լավ կլինեք, եթե մեր Պետհրատն էլ սովետական գրողների «ստեղծագործությունները» ընդունեք քարի տախտակի վրա: Կարդար, հոնորարը վճարեք, հետո թքեք սրբեք՝ արժանանալով ընթերցողի օրհնությանը»:

Ինչպես երևում է՝ գրողը այս հատվածում բաց չի թողել նաև ժամանակի գրականությունը, ինչը նույնպես կարիք ուներ սրբվելու՝ գնալով՝ արժանանալով ընթերցողների օրհնությանը:

Լեո Կամսարի մտահոգության կիզակետում մեկ այլ թեմա է. ինչպե՞ս կարող է մարդ ապրել մի երկրում, որտեղ այդքան անարդարություններ կան, չբարձրացնել բողոքի սեփական ձայնն ու... լինել կուշտուկոտ: Դեռ ավելին, «...երբ այս մարդիկ չեն գրում այն, ինչ ես եմ գրում, ինչպե՞ս կարող են ման գալ այսպես ինքնագոհ», - հավելում է երգիծաբանը: «-Հարևան,- ասում եմ մտքիս մեջ, ինչպե՞ս կարող ես ապրել, ինչպե՞ս կարող ես մեռնել՝ առանց քո ապրած կոմունիստական շրջանի պատմությունը քո հետնորդներին թողնելու: Բաս, մեր որդիները չիմանան՝ ինչ տառապանքներ ենք քաշել բոլշևիկների ձեռքը: Չնկարագրե՞նք՝ ինչպես սա քառասուն տարի ձեռներնիս կապել են ետևներիս, բերաններս շորը ճխտած, պարանը վզներիս զցած, քաշում են դեպի գոյություն չունեցող սոցիալիզմը: Լավ, քաշում են՝ քաշեն, մեր վզի պարանը գեղ մի փոքր երկար անեին, որ ճանապարհի երկու

կողմերը բուսած խոտն արածեինք, ուժ հավաքեինք, ապա հասնեինք այդ անտեր սոցիալիզմին»:

Մեկ այլ պարագայում հեղինակը նկարագրում է, թե ինչպես են Լենինի հատորները «օգտակար» դարձել ընթերցողի և հատկապես իր համար: «Բանտում եղած ժամանակս ամեն բանտարկյալ, կամենալով պետության աչքը մտնել, բանտի գրադարանից Լենինի հատորներն էր վերցնում՝ որպես թե կարդալու համար: Երևակայեցեք՝ ես էլ էի վերցնում, բայց ոչ թե պետության աչքը մտնելու համար, այլ սեփական կարիքներից դրդված: Բարձս շատ ցածր էր, մի քանի հատոր դնում էի բարձիս տակ, մնացածների վրա նստում էի՝ գետնի խոնավությունից պաշտպանվելու համար: Այս կերպ ուսումնասիրողի համար հարկավ լենինիզմն ամենաճշմարիտ գիտությունն է, և մարդկությունը ամեն ինչի կարող է հասնել սրանով... բացի երջանկությունից»:

Եվ վերջապես, կրկին ինքնակենսագրական տողեր, երիցս դառն ճշմարտություն, որ այդ տարիներին կարող էր դառնալ յուրաքանչյուրի կենսագրությունը, իսկ ավելի ճիշտ՝ ցանկացած անհատի կենսագրությունը, որ, ապրելով այդ իրականության ճիրաններում, գրիչ կարող էր վերցնել ձեռքը ու խոսել գոնե թղթի հետ, և դա այն ժամանակ, երբ նույնիսկ մտածելը, անգամ լռելն էր վտանգավոր: Նշվելիք էջերը վերոհիշյալ անտիպների վերջին էջերը չեն, սակայն մեր խոսքը հենց դրանցով էլ ամփոփենք, որովհետև ինչ էլ ասի երգիծաբանը, միևնույն է, կյանքի մասին է՝ անցյալի, տվյալ ժամանակահատվածի, թե՛ ապագայի. չէ՛ որ գրողի մտքերի մի մասն էլ աֆորիստիկ արժեք ունի և արդիական է հնչում բոլոր ժամանակների համար՝ պատկերավոր, հարուստ խորքով և հակիրճ:

Հատվածը մեջբերում ենք առանց կրճատումների. իրականում անհնարին է անգամ մեկ տող առանձնացնել այն կոտ ամբողջությունից, որը բնորոշ է հեղինակի մտածողությանն ու նրա շարադրած էջերին:

«Երեքշաբթի 6. Իմ ծնունդից մինչև իմ մահը կապված է մի լար, երևակայությունս լարախաղացի նման անվերջ գնում-գալիս է այդ լարի վրա: Ասում են՝ ամենաարագ հաղորդակցության միջոցը ինքնաթիռն է հիմա, բայց սխալ է: Ինքնաթիռը չի կարող մարդու ծննդյան ու մահվան միջև ընկած ճանապարհը կտրել մի ակնթարթում. այդ ճանապարհը կտրում է երևակայությունը: Իմ երևակայությունը այն թագրեհի թելն է, որ կապում է իմ կյանքի բոլոր երեկները իմ կյանքի վաղերին: Չլիներ երևակայությունս՝ իմ երեկներն ու վաղերը իրար կողքից կանցնեին՝ իբրև անծանոթներ՝ առանց իրար բարևելու:

Ես յոթանասուն տարեկան եմ. ամեն անգամ, երբ երևակայությունս երթնելում է այդ տարածությունը, քառասուն տարվա վրայից ցատկում է: Այդ իմ չապրած տարիներն են: Այդ տարիներին բոլշևիկյան իշխանությունը եկավ, քացու մի հարվածով դուրս վոնդեց ինձ ղեկավարող կամքս, մի էշի նոխտա դրեց վզիս, տարավ կապեց սոցիալիզմի դատարկ մտորին, և ես սա քառասուն տարի միայն ազատություն եմ զոռում: Բայց ես մի ժամանակ մարդ էի... Այդ նույն բոլշևիկյան կառավարությունը ամբողջ քսան տարի նոխտայիցս բռնած ման ածեց իր բանտերում ու աքսորավայրերում: Երբ ուժասպառ եղա, բերեց կապեց ախոռ՝ մեռնելու:

Ձի եմ ասում, որ յոթանասուն տարվանից քառասունի վրայից ցատկ կատարի: Այդ ցատկը իմ երևակայությունը կատարեց: Ու հիմա, երբ մեռնում եմ, չգիտեմ՝ ո՞ր ձողին, ո՞ր օղին կապեմ հեզ ձիուս սանձը, որ իմ մահվանից հետո էլ գնա-գա կյանքիս լարի վրա: Պատերազմներում, երբ ընկնում է զինվորը, նրա ձին երկար չի հեռանում իր տիրոջ դիակից, կանգնում ու պաշտպանում է նրան գազաններից ու գիշակեր թռչուններից: Պատահել է ձի, որ մինչև վերջ էլ չի հեռացել իր տիրոջ դիակից:

Իմ ձի, աղաչում եմ քեզ, կանգնիր ու պաշտպանիր ինձ բոլշևիզմից: Նրանք պղծեցին իմ կյանքը, գեթ թողնեն, որ մաքուր մեռնեմ:

Չթողին որպես մարդ ապրել, գեթ թույլ տան մարդ մեռնել...»:

Այսպիսով, Լեո Կամսարի «Սոցիալիզմի Սահարա» ժողովածուից դուրս մնացած մի քանի հատվածների մասին խոսելով և ներկայացնելով դրանց մի մասը ամբողջությամբ, մեր նպատակն է՝ հետազայում, գուցե ամենամոտ ապագայում, գրողի բոլոր գործերը ի մի բերողների ուշադրությունը սևեռել վերոհիշյալ անսկատ մնացած էջերի վրա, որպեսզի դրանք ի վերջո իրենց իրական, ժամանակագրական հաջորդականության կարգով ճիշտ տեղը գտնեն:

SUMMARY

**«We Were Deprived of Living humanly,
So Let us Die humanly...» or « Thoughts about the
Collection by Ler Kamsar
«Sugar of Socialism » (1959)
(dedicated to 130-th anniversary of Ler Kamsar)**

In this article we are talking about the collection of Ler Kamsar's works "Sahara of Socialism" / (1959). The word refers to a series of diaries, which is actual in the archive of the author for some reason or another. However, these pages have already been published in the Appendix, of the monograph "The diary prose of Ler Kamsar" published by us. The aim of the article is to attract the attention of the developers and compilers of Ler Kamsar's book in this direction- these mentioned pages must certainly be included at the beginning of 1959.

Keywords: *diary, archival materials, collection, autobiographical pages, literature, monographs, memoirs.*

РЕЗЮМЕ

**«Не разрешили прожить человеком, так хоть умереть по
человечески...»
или рассуждения о сборнике Лера Камсара
«Сахара Социализма» (1959г.)
(130-летию Лера Камсара)**

*Карине Мартиросян
кандидат филологических наук
Гюмрийский филиал ГАХА*

В этой статье речь идет о сборнике Лера Камсара «Сахара Социализма», опубликованном в 2009 году. Речь идет в основном о ряде дневников, которые отсутствуют на страницах книги. Последние есть у автора в архиве. Возможно в силу субъективных обстоятельств они были упущены. Тем не менее, эти страницы уже опубликованы в Приложении, опубликованном нами в монографии «Дневниковая проза Лера Камсара». Целью статьи является привлечь внимание дальнейших составителей книги Лера Камсара, и включить эти дневники в сборник «Сахара Социализма» 1959 года.

Ключевые слова: *дневник, архивные материалы, сборник, автобиографические страницы, литература, монографии, мемуары.*

ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԳԻՐՔ